

## ՄԵՂՎԱՊԱՀԱԿԱՆ ՀՆԱԳՈՒՅՆ ԽՐԱՏ-ԽՈՐՀՈՒՐԳՆԵՐ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆԻ ՁԵՌԱԳՐԵՐՈՒՄ

Մեղվապահությունը հայերի հնագույն դրաղմունքներից մեկն է, որը գոյություն ունի մինչև այսօր և իր համեստ տեղն է դրաղեցնում ժողովրդական տնտեսության մեջ: Ուստի նրա մասին մեզ հասած ամեն մի բանավոր, առավել ևս գրավոր տեղեկությունները, խրատ-խորհուրդները ոչ միայն պատմամշակութային, ճանաչողական, այլ նաև գործնական, կիրառական նշանակություն ունեն:

Այս տեսակետից առանձին արժեք են ներկայացնում Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերում պահպանված մեղվապահական խրատ-խորհուրդները: Առաջինը Մատենադարանի № 8185 ձեռագրում Ալեքսիանոս բժշկի «Բժշկարանի» մեջ պահպանված «Վասն մեղուաց» քսանչորս խրատ-խորհուրդներն են: Այն շուրջ վաթսուն տարի առաջ հրատարակել է բանասեր Ն. Ակինյանը «Մեղվապահությունը հայերի մոտ» հոդվածում («Գյուղատնտեսական կյանք», № 6, 1926, Երևան, էջ 45—50) և օգտագործվել Ա. Կոթոլյանի, է. Վարդանյանի, Զ. Քումանյանի «Մեղվաբուծություն» գրքում (Երևան, 1961 թ., էջ 18—20): Առաջին հրատարակությունը այժմ ամսագրային հաղվագյուտ նմուշ է, իսկ նշված գրքում օգտագործված է առաջին հրատարակությունից տասնմեկ խրատ:

№ 8185 ձեռագիրը գրված է Ալեքսիանոսի ձեռքով XVI դարում: Բացառությամբ սկզբի տասներկու թերթերի (սկզբից 2 թերթ պակաս է), մնացած մասը բժշկարան է (վերջից թերթի)՝ բաժանված ութսուն գլուխների (որոնց ցանկը գրված է սկզբում), իսկ գլուխները՝ ենթաբաժիններ ունեն: «Բժշկարանը» կազմելիս Ալեքսիանոս բժիշկը ոչ միայն օգտագործել է ուրիշ բժշկարաններ, այլև որոշ բան ավելացրել է սեփական փորձից, ուստի սույն «Բժշկարանի» ոչ միայն գրիչը, այլև հեղինակը պետք է համարել Ալեքսիանոս բժիշկին:

Ալեքսիանոս բժիշկը եղել է նաև մեղվաբույժ և «Վասն մեղուաց» (էջ 84բ—91բ) խրատ-խորհուրդները շարադրելիս բերել է նաև իր փորձը՝ «Սա մեղատը Ալեքսանիոս աչօք տեսեալ եմ և արարեալ»: Իսկ ինչ ձեռքի տակ չի ունեցել և չի իմացել, առաջարկել է այլ աղբյուր. «Ահա որդեակ իմ, — ավարտում է իր խրատները նա, — մեղուաց թիմարն այս է, որ մի ըստ միտջէ գրեցի պարզ և լիստակ բանիս: Եւ այն, որ մնաց, իմաստուն մարդու հարց և ուսիր, և զմեղատը Ալեքսիանոս յիշեա ի տէր»: Ալեքսիանոս բժիշկը ապրել և ստեղծագործել է Շամշորաձորի շրջանում:

Մատենադարանի № 2154 ձեռագրի (գրված է XV դարում) 6բ-7ա ազատ մնացած էջերում XVII դարում մի մեղվապահ գրում է. «Խրատ մեղի» խորհուրդները, որը շրատարակված նյութ է: Անանուն մեղվապահի խրատների մի մասը համընկնում են Ալեքսիանոս բժիշկի խորհուրդներին: Սակայն կան նաև խրատներ, որոնց միայն այստեղ ենք հանդիպում:



Գիտական հասարակայնության և մեղվապահությանը զբաղվողների սեփականությունը դարձնելու նպատակով հրատարակում ենք սույն խրատները բնագրական և բանասիրական որոշ սրբագրություններով, հույս ունենալով, որ նրանք օգտակար կլինեն ինչպես գիտնականների, այնպես էլ մեղվապահների համար:

84ա

ՎԱՍՆ ՄԵՂՈՒՅՑ\*

84բ

Խոտ մի կայ, որ ձագախոտ ասեն, և ունի գեղեցիկ շնորհս վասն մեղաց. ի բազում ամաց գիտացեալ և յուրով ժամանակաց փորձեալ, և դտաին նա ի ձորն Շամքօռա, ի գիւղն, որ կոչի Գառնակեր՝ ի վերայ Չարերք գետոյն, ի նոցա յայգետանքն լինի, որ է բազերն. և թէ այլ տեղ բուսանի՝ ո՛չ գիտեմ՝: Եվ ով ոք կամի առնուլ զնա, գարնանա[յ]ին ժամանակին երթա[յ] և բահով առնու զարմատ նորին զհողովն և տանի զնէ ի պարտիզի կամ ի ջրարբին տեղ. և այնպես է սահմանք, քանզի առանց ծաղկի և առանց սերման է: Եւ յորժամ ձագ ելանէ ի փեթակէն<sup>2</sup>, առնուն սակաւ մի ի խոտէն և կանգն[են] ի դրուց դեհն փարախին, ճմռեն

85 ա

զխոտն ի մէջ ափին և տաք փշեն ի վերայ նորա, և ձգեն ի փետակն<sup>2</sup>. և առ ժամայն ժողովին ամենայն մեղուքն և մտանեն ի փեթակն<sup>2</sup> առաջնորդովն իւրոց և ապա կալնուն, զբերանն փեթակին<sup>2</sup> և տանին զնեն ի կարգն՝ առանց աշխատանց: Եւ թէ ձագ փախչի, առնուն ի խոտէն և վազեն յետևանց, և ի հասանելն ճմռեն զխոտն և տաք փշեն ի վերայ նորա. յայնժամ թողուն զառաջնորդն իւրոց և դառնան ի վերայ խոտոյն. և այնպէս արգելուն զմեղուքն ի փախչելոյն, մինչև հասուցանիցեն ի փեթակն:

Ես մեղաւոր Ալեքսիանոսս աչօք տեսեալ եմ և արարեալ. Տէրն գիտակ է, որ սուտ չէ:

85բ

Ոմանք ասեն, թէ այն խոտոյ հոտն նման է իւրոց առաջնորդի հոտոյն, վասն այն սիրեն զխոտն զայն:

[Վ]ասն մեղաց պահելո[յ]

Թէ ուզես որ զքո մեղուքն աճեն և շատանան, այս ԻԴ (24) խրատովս պահես զոր գրեմս.

Առաջին խրատ այս է, որ փարախի տեղն տաք պիտի և անքամի, երեսն դէպի հարաւ, որ արևն շուտ անկանի և յուշ անցանէ:

Երկուսն այս է, որ փարախն խիստ ամուր պիտի շինած, որ ի գողէ և ի արջէ<sup>3</sup> և այլ պատահմանէ անահ և անկասկած լիցի:

86ա

Երեքն այս է, որ փարախն շափով պիտի շինած. զերկայնութիւնն՝ Լ (30) թիզ, և զլայնութիւնն՝ Ի (20), և զպատին բարձրութիւնն՝ ԺԲ (12), և զզլուխն՝ փշով ամրացուցած: Նոյնպէս և զսրահն, որ է դափն, ամուր և ազուր պիտի շինած, վերեն տախտակած, ծեփած և հողով ամրացուցած. զերկայնութիւնն սրահին՝ Ժ (10) թիզ և զլայնութիւնն ԺԸ (18), զբարձրութիւնն՝ Ը (8). մէջն կող ծեփած ու Գ (3) դիմաց պատուհան. և թէ ուզես որ փարախն այլ մեծ լինի կամ այլ փոքր, դու այս հսապովս արա զմեծութիւնն և զփոքրութիւնն:

\* Մատենադարան, ձեռ. № 3185, Թերթ 34ա-31բ:



Գ (4) այս է, որ փեթակներն միաշափ պիտի. կողանակին երկայնութիւնն՝ Բ (2) թիզ ու Ժ (10) մատն պիտի, և լայնութիւնն՝ Ա (1) թիզ և Բ (2) մատն, զգլուխն և սոքն միապէս, մէջքն՝ քիչ մի հուպ<sup>4</sup> տուած: Գարձեալ հաստ ուռն Գ (4) պիտի ճզած, բարակն՝ Գ (3), կոշտ մէրերն ընտրած և կակուղ մէրերն բարակ ուռով. մէրն և ուռն կոկ տաշած պիտի և դայիմ արած Գ (3) արձով: Ա (1) հալզա || գլխոյն պիտի և Ա (1) հալզա՝ ոռքին, Բ (2) լաւ բոլոր և իրար պարապար, ո՛չ աւելի և ո՛չ պակաս: Տցանակին<sup>5</sup> երկայնութիւնն՝ Բ (2) թիզ և Գ (4) մատն պիտի Բ (2) արձով, գլխո լայնութիւնն՝ Ա (1) թիզ և ոռքին՝ Ա (1) թիզ և Բ (2) մատն, գլխո[յ] հալզէն՝ փոքր և ոռքին՝ մեծ, գլուխն դիֆարած և Գ (3) դիմաց կեռ տուած: Այս է շափն կողանակին և ցցանակին<sup>5</sup>. քան դայս աւելի մեծն և փոքրն՝ շատ զարար ունի:

Ե (5) այս է, որ յորժամ զփեթակներն<sup>2</sup> ծեփել կամիս, յիստակ թրիք ժողովէ. որ հողախառն լինի գեաիւնն, լաւ աւելէ ու թրիք վերայ ած, մանր մոխիր մաղէ, քիչ մի ջուր ած, լաւ կոխ տուր, որ աղէկ ջիւլանա[յ]. ապա զփեթակներն || ծեփէ ի դէմ արևուն. յորժամ լաւ շորանա, հորթի թրիք ժողովէ, մոխիրն քիչ մի շատ արա քան զառջինն, որ սպիտակ գա[յ], ապա լաւ երեսածեփ արա, հէնց որ ո՛չ մէրն երևա և ո՛չ ուռն. բարակ ծեփածն լաւ շի լինիր, հաստ պիտի ծեփած, և պատրասա կաց, որ մէջն ցեխոտ չլինի. յորժամ հաւասար շորանա[յ], մէջն հաւասար շոր քսէ և շարահոտ տուր. ապա փեթակներուն կիսէն յառաջն ճէճակ տուր, որ դայիմ լինի, փուլ չգայ: Ոմանք ասեն, թէ զումաշի թրքով ծեփած փեթակն ճանճ շի կենալ. սուտն և իրանն ո՛չ դիտեմ. ով որ հաւաս ունի, թող փորձէ: Զ (6) այս է, [որ] յորժամ || փեթակներուն տեղն շինել կամիս, Բ (2) թիզ բարձր արա, որ ներքէն ցցանակ<sup>6</sup> շարմեա, ապա թէ դայս ո՛չ առնես, Ա (1) թիզ բարձր արա, որ փեթակին մէջն հեշտ տեսնուա և<sup>7</sup> զմեղրն<sup>8</sup> հեշտ կտրես: Եւ զմեղաւորս չիշես ի Տէր:

Է (7) այս է, որ յորժամ գարունն հասանիս, համբեր[ե]ա մինչև ձիւնն հաւասար հալի և ծառքն ծաղկին: ապա զփեթակն ի դուրս դիր. և թէ մեղուն ձիւն տեսանէ կամ ուժով քամի՝ մեղանի ի ճանապարհին և ոչ ժամանէ ի փեթակն իւր:

Ը (8) այս է, որ փեթակներն Գ (3) դաս լինի. առաջինն՝ ծանր և վերջինն՝ թեթեւ, և միջինն՝ ծանր քան զվերջինն. յորժամ ի կարգ դնես, յառաջ զծանր փեթակներն շարէ, || յետ այնորիկ՝ զմիջակն, որ լաւ լինի:

Թ (9) այս է, որ յետ դուրս դնելոյն Գ (3) օրն որ անցանի, զու գնա զդիֆարներն վեր առ հաւասար, և բարակ մուխ տուր, դէմ արևուն խաղացո. թէ փակին մէջն ցեխոտ լինի՝ դանակով քերէ, և թէ փար կա կամ մեղած մեղու, փոքր աւելով կամ շորով լաւ սրքէ, ապա զդիֆարներն դիր, բոլորքն շոր մամուռով կալ, որ քամի չմտանէ:

Ժ (10) այս է, որ յորժամ զփեթակներուն ոռքն կալնուա, փարախի միջին հաւասար ջուր ցանէ, յիստակ աւելէ, աղրն դուրս ձգէ, որ փարախն յիստակ պիտի և սիրուն:

ԺԱ (11) այս է, որ դուրս դնելոյն հետ մինչև ի տուն դնելն ամենեկին<sup>9</sup> || ցելի կամ թրիք մի տանիլ ի փարախն, և թէ բանաս և խփես, բոլորքն շոր մամուռով կալ. դէջ մամուռն զարար է:

ԺԲ (12) այս է, որ գարունն զդիֆարներն ճանճէն մօտիկ դիր. քանի



որ ճանճն շատանա[ւ] դու դիֆարն յետ քաշէ, և թէ փեթակն լցւի, դիֆարն դրադին հաւասար դիր և բոլորքն մի՛ կալնուլ, որ փղձկի ոչ: Եւ թէ յաղքատ փեթակ լինի, այնոր դիֆարն յետ մի՛ քաշել՝ մինչև հարուստանա[ւ]:

ԺԳ (13) այս է, որ փեթակներու վերեն լաւ ծածկած պիտի կեչով կամ տախտակով, որ արև կամ անձրև վնաս չանէ և դու ափսոսաս և հայիֆ ասես:

89ա ԺԴ (14) այս է, որ ամ||առն և ձմեռն մեղրն քո տանէն պակաս մի անել. և թէ հէնց ժամանակ հանդիպի, որ քեզ մեղրն չլինի, դու գինի տուր, այլոցէ մեղր առ, որ դապուն ճանճն առանց խեծի շի ապրիլ, նոյնպէս և նոր կալած ձագն թէ եղանակն թոռ ու թաց լինի, առանց խեծի շուր կու դառնա և քեզ տրամեցուցանէ:

ԺԵ (15) այս է, որ յորժամ ձագ ելանէ ի մօրէն, դու պատրաստ կաց, որ փախչի ոչ. ձագախոտն բռնէ առջն կամ ձագակալ ու մէջն մէրատունն ճէճակէ ու փարախին դուրս դեհն դիր:

89բ ԺԶ (16) այս է, որ յորժամ ձագն ի փեթակն կալնուա, ոտքովն մաղած կամ նօսր շալ, որ փղձի ոչ, ապա թէ շուխա[ւ] ամես վերայ՝ շուր||կու դառնա, մանաւանդ թէ ամառնամտին լինի՝ խիստ վնաս է, պատրաստ կաց, որ շիռշիմանիս և ափսոսաս:

ԺԷ (17) այս է, որ թէ առաջնորդն գողանա[ւ], դու փեթակն դուրս կալ տար մութ տուր, ճանճն դուրս արա, առաջնորդն գիտ և սպանէ, ճանճն ձագակալին առ տար մին զապուն ճանճի վերայ ձգէ: Եւ թէ ամառն շոգովն՝ ճանճ կալնուա, և նա ի մէջ փեթակին դարա չբռնէ, մեծ մէրատունն կտրէ և ճէճակէ, որ տուն թող շինի<sup>1</sup>: Դարձեալ որպէս ուժով ցուրան մեծ վնաս է մեղացն, նոյնպէս և ուժով արնն. յորժամ ամառնամուան հասանիս, փեթակներուն վերայ շուր կապէ մինչև Գ (3) ամիսն թէ տերևով թէ խոտով: ||

90ա ԺԸ (18) այս է, որ յորժամ մեղր կտրես, մութն փեթակէն դուրս բեր. մոռանաս ոչ, որ փեթակներն<sup>2</sup> փարախովն կու այրի, և դու դարձամահ կու լինիս, այլ հասնիլ շես կարել:

ԺԹ (19) այս է, որ տղա[ւ] կամ հարսն կամ աղջիկ թէ իմանաս որ շահիլ է և ճանճի հասպն չգիտել, հրաման մի՛ տալ, որ մեղրն կտրէ կամ փեթակներու մէջն տեսնու, որ զարարն շատ է:

90բ Ի (20) այս է, որ յորժամ գործն հնանա[ւ] և սեանա[ւ], դու այն տարին ամառն կամ աշունն այն փեթակէն<sup>2</sup> մեղր մի՛ կտրել, թող որ լի մնա[ւ], և ի տուն դնելո[ւ] ժամն դիֆարի ափանն դուռն կտրէ ու ոտքն դիֆարէ, վերայ արձ արա և ծնփէ և տան դիր և յորժամ գարունն հասնիս, փեթակին<sup>2</sup> շուրջ տուր, ոտքն գլուխ արա||և բան թող, երեք օրն անցնի, ապա զգլուխն բաց և սե մեղրն կտրէ և սպիտակն թող, խիստ լաւ է:

ԻԱ (21) այս է, որ սե մեղրն կճուճն ձգէ և շերեփով լաւ տրարէ, խփէ ու թոնիրն դիր, և թող որ մեղմ հալէ, և ապա դուրս բեր, ի վայր դիր, որ քիչ մի հովանա[ւ], դրդալով երեսն հաւաքէ ու մոմ եփէ, և մեղրն աման ած, խիստ պատուական է:

ԻԲ (22) այս է, որ թէ գարունն, թէ աշունն փեթակն որ խեծկեր կտիւէ, վեր անիլէն ի զատ, այնոր այլ որիչ ճար չկա[ւ], ապա թէ վեր շանես, դու տրամիս և շարկամն ուրախանայ:



Քսաներէքն այս է, [որ] յորժամ կամիս զփեթակներն տուն դնել, յառաջ զմամուռն քաշէ հաւասար և դիֆարներն յառաջ||դիր, մած, ապա իրիք բեր, մոխիր մաղէ վերայ և կազմէ, բարակ կլաւակ արա և բուրբն ծեփէ. թող որ մին շարաթ կենա[յ], որ լաւ շորանա[յ], և ապա տուն դիր:

Ի՞ (24) այս է, որ ճանճատունն ո՛չ խիստ տաք պիտի, ո՛չ խիստ ցուրտ. յերդն և դուռն կալած պիտի, որ իսկի լոյս շնկնի մէջն. փեթակներն լաւ դասած պիտի և տեղն ցամաք, և թէ չիկնի այսպէս, վնասն այս է. թէ տեղն խիստ տաք լինի, ճանճն կու գոշա[յ], ամենեկն չի քնիլ, մեղրն կուտէ, յետո սովամահ լինի. թէ խիստ է, նա մեռանի ի սաստիկ ցրտո[յ], թէ լոյս ընկնի, ճանճն կու քամվի և փեթակն դարտակ կու մնա[յ], թէ գէշ լինի, առաջնորդն||կու գողանա[յ] և մեղրն կու թթուի<sup>12</sup>:

Ահա, որդեակ իմ, մեղուաց թիմարն այս է, որ մի ըստ միոջէ գրեցի պարզ և յիստակ բանիւ, և այն որ մնաց, իմաստուն մարդո[յ] հարց և ուսիր. զմեղաւոր<sup>13</sup> Ալէքսիանոսս յիշ[ե]ա [ի] Տէր:

Բնագրում՝ 1 գիտեն: 2 է փխ ե: 3 առէ: 4 հուսի: 5 ցրց փխ ցց: 7—8 կրկ: 9 ամէնեկն: 10 շորովն: 11 չիկնի: 12 թրթ փխ թթ: 13 մեղավոր

6 բ

## ԽՐԱՏ ՄԵՂԻԻ

Երբ ձիւնն<sup>1</sup> ցամաքի և ջեր լինի և գարուն. զփեթակն ի դուրս դիր, հանց տեղ, որ քամի խիստ շառնու. Ա (1) կարգ քար շարէ ի ներքն՝ շանկանի ոփի նման, և կարգ մի խոտ դիր և կարգ մի փեթակ, ի վերէն ջրով ծածկէ. տաք կենալն լաւ<sup>2</sup> է:

Չամենն տես ի դուրս դնելն՝ թէ գէշ է առեր, բորբոս կայ, Ա(1) տամ դէմ արեգակն դիր և բաց. ի գէշ տեղն մի դներ ձմեռն, ի տաք տեղ դիր, որ ջուրն չի սառի, յարեգակն բաց՝ դիր Ա (1) տամ: Թէ մեղր սակաւ<sup>3</sup> լինի, մեղր դիր ի ներս, կամ շամիչ և ձէթ ծեծէ և ջրով տրորէ, և զշանչքն յիստակէ և ամանով ի փեթակն դիր, որ ուտեն և դորանան, կամ ըրուպ կամ մեղրաջուր դնես, բայց յերես ջրին ցախ դիր, որ մեղուքն ի ներս շանկանին ի ջուրն և խեղդին: Եւ ծուխ տուր յամէն Ը (8) օր, երբ թուխս լինի, շատ ծուխ մի տար: Երբ ուրի ձագն և շատանայ, ծաղկի երեսն դեղին տայ, Գ (3) օր էլ ձագ տայ. մօտ<sup>5</sup> կաց, երբ ձագն ելանէ՝ շուտ առնուա, մէկ տամ կու կենայ, թաշի և գնայ:

Խոտ մի կայ ձագախոտ առն. զայն առ և զփեթակի մէջն քտէ, կամ մեղրաջուր. երբ զձագն ի ներս դնես, զբերան փեթկին շալով կալ ու|| զբերանն ի գետին դիր և զոտքն ի վեր, որ ծակն ժողովին:

Յորժամ խաղաղին, զմէրն ի տեղացն ի վեր կալ, և զձագն ի մօր տեղն դիր. զմէրն կուտէ, զծաղին ներքն կտրէ, ի ներքն փեթքին զինչքան զոչխարի պտուկ է, զամէն կտրէ, զմէրարոժոժ<sup>6</sup> ձագ չի տայ և գնայ: Ոմանք զմէրարոժոժն<sup>7</sup> կու կտրեն, յետ ձգեն և զայլ որդն<sup>8</sup> կու թողուն, որ ձագ հանեն և շատանայ: Չմէրն տար յայլ տեղ դիր, հանապաղ աչք տուր, ձագ կուտայ և գնայ: Բ (2) շարաթն անգա[մ]<sup>9</sup> մի ծուխ տուր. ոչխարին աղն է շահ և փեթկին՝ ծուխն: Երբ փեթակն լցի, ի

<sup>1</sup> Մատենադարն, ձև. Մ 2154, թերթ 6բ—7ա:



յօրէ յօր լինի ձագ տալն, ի յետքն Բ(2) տեղ թող, որ շխեղդին: Երբ ձագն քիչ լինի, Բ (2) ձագին Ա (1) մէր թող, ի վերայ միմեանց ձգէ:

Եւ թէ ձագն քիչ մի ծաղ է արարեր, քսսա մի կամ սահ մի մեղրոտ արայ, ի վերայ ծակին, որ մեղ[ն]ւքն ելանեն ի փեթկէն ի քարղան լցւին, և յետքէն ծուխ տուր:

Եւ զմիւս ձագն որ առնուս, ի յետքէն ի ներս լից, քայց յառաջ մեղրաջուր փչէ ի փեթակն և ի վերայ յետին ձագին, որ առաջինք գան և զյետինքն լիղեն որպէս կով զհորթն և միաբանին: Եւ յորժամ ցեց անկանի ի փեթակն, Բ (2) կում քացախ առ ի բերանդ<sup>10</sup> և ի նես փչէ:

Բնագրում՝ 1 ձուկն: 2. լօ: 3 սակօ: 4 թուլու: 5 մաւու: 6 զմէրաբօծօճէ: 7. զմէրաբօծօճն, 8 որթն : 9 անկա[մ]: 10 բերանու:

А. ГАСПАРЯН

## СОВЕТЫ ПО ПЧЕЛОВОДСТВУ В СРЕДНЕВЕКОВЫХ АРМЯНСКИХ РУКОПИСЯХ

(Резюме)

В публикации представлены два цикла советов по пчеловодству, содержащихся в армянских рукописях Матенадарана № 8185 (XVI в.) и 2154 (XV в.). Текст рукописи № 8185 был впервые опубликован Н. Акиньяном в 1926 г.

A. GASPARIAN

## CONSEILS D'APICULTURE DANS LES MANUSCRITS ARMÉNIENS MÉDIEVAUX

(Résumé)

Cette publication présente deux cycles de conseils d'apiculture provenant des manuscrits arméniens du Maténadaran nos 8185 (XVIe s.) et 2154 (XVe s.). Le texte du manuscrit n° 8185 a été publié pour la première fois par N. Akinian en 1926.